Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից ՀՀ ԱԺ տարածքի (Դեմիրճյան փողոցի կողմից), կանաչ գոտու պատի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-23/12 ծածկագրով ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

21 հունիսի 2023թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Լևոնյան, Ա.Լալայան, Ն.Հարությունյան, Մ.Սամսոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Ներսիսյան

1. *Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ*

Չափաբաժնի համարը	*Չափաբաժնի անվանումը*	*Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)*
1	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	1234552.32

2. *Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին*

Հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps /www.armeps.am/ համակարգի միջոցով 2023 թվականի հունիսի 21-ին ժամը 11:00-ին:

3. *Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.*

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցեներ
1	«ՍԱՀԱԿՅԱՆՍՇԻՆ» ՍՊԸ	Սարի-թաղ 6-րդ շարք 174 տ,

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի

4. *Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը*

Հ/Հ	Մասնակիցներ	Առաջարկած գինը /ՀՀ դրամ/		
		Գնի առաջարկն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«ՍԱՀԱԿՅԱՆՍՇԻՆ» ՍՊԸ	1035408	-	1035408

5. *Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ*

ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-23/12 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից Հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

6. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

7 . Տվյալներ՝ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

21.06.2023թ. ժամը 11:00-ին կայացած նիստում Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց՝

- «ՍԱՀԱԿՅԱՆՍԾԻՆ» ՍՊԸ -ի հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տեղեկություն՝ հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման վերաբերյալ

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի մասնակից «ՍԱՀԱԿՅԱՆՍԾԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

9.1 Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՍԱՀԱԿՅԱՆՍԾԻՆ» ՍՊԸ -ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

9.2 Հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

9.3 Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ:

9.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ **Վարդան Թորոսյան**

անդամներ՝ _____ **Լևոն Լևոնյան**

_____ **Անժելա Լալայան**

_____ **Նշան Հարությունյան**

_____ **Մերուժան Սամսոնյան**

քարտուղար՝ _____ **Անի Ներսիսյան**